



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

№ 168 Է 17 23 09 2015

## ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2015թ. մայիսի 20-ին կնքված ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի 1.12 և 1.13 կետերով և նպատակ ունենալով ապահովել ԵՊՀ աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման գործուն մեխանիզմներ


հրամայում եմ.


1. Ստեղծել աշխատողների անվտանգության ապահովման, առողջության և կոլեկտիվ պայմանագրի հարցերով համատեղ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հետևյալ կազմով.

- Մարկոսյան Ռուբեն Լևոնի - Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր (գործատուի կողմից),
- Մալխասյան Արարատ Յուլիկի - Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր (գործատուի կողմից),
- Թադևոսյան Արմեն Ադամի - Իրավաբանական բաժնի վարիչ (գործատուի կողմից)
- Մամաջանյան Արտաշես Ռաշիդի - Հաշվապահության և գնումների բաժնի արհբյուրոյի նախագահ, Արհեստակցական կազմակերպության քարտուղար (արհմիության կողմից)
- Մխիթարյան Ռազմիկ Պարսամի - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ, (արհմիության կողմից)
- Պետրոսյան Աշոտ Հենրիկի - Իրավագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ (արհմիության կողմից):

2. Հանձնարարել հանձնաժողովին 15-օրյա ժամկետում գումարել հանձնաժողովի անդրանիկ նիստ, ընտրել հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է ԵՊՀ Կոլեկտիվ պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

  
 «Երևանի պետական համալսարան»  
 հիմնադրամի ղեկավար Ա.Միմոնյան

  
 ԵՊՀ Արհեստակցական կազմակերպության  
 նախագահ Ա.Ավետիսյան